



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՎՏՈՒՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ
ԲՅՈՒՐՈ


ԱՊՊԱ ՀԱՄԱԿԱՐԳԸ 5 ՏԱՐԵԿԱՆ Է

Ամփոփում, Խնդիրներ, Ծրագրեր


ԱՊՊԱ համակարգի առաջին 5 տարիների ամփոփ մի շարք ցուցանիշները




Ապահովագրված ավտոմեքենաների քանակը




Ապահովագրական վճարները




Հատուցված դիմումների քանակը




Մերժված դիմումների քանակը




Ապահովագրական հատուցումները (ներառյալ հատուցումներին առնչվող պահուստները)




Հատուցման միջին գումարը





Վնասաբերությունը (հատուցումների մակարդակը)



Ապահովագրական հատուցումների կառուցվածքը 2015թ-ին



Բոնուսային, մալուսային և բազիսային դասերում գտնվող վարորդների քանակը՝ 31.12.2014 և 31.12.2015 թվականների դրությամբ



Ձեռքբերումները և հիմնական խնդիրները

Ձեռքբերումները	Առկա խնդիրները
<p>1. ԱՊՊԱ-ն կայացած և հանրային գիտակցության մեջ ձևավորված համակարգ է, այն էապես լուծեց իր առջև դրված սոցիալական խնդիրը</p>	<p>1. ԱՊՊԱ համակարգում կիրառվող գործընթացների տևողությունը և հարմարավետությունը դեռևս գոհացնող մակարդակի վրա չէ</p>
<p>2. Ձևավորվել և զարգացել են ապահովագրության ոլորտի մի շարք անհրաժեշտ ենթակառուցվածքներ. համապատասխանաբար առկա են բավարար նախապայմաններ, փորձ և հնարավորություններ սոցիալական այլ խնդիրներ ևս պարտադիր ապահովագրության համակարգերի միջոցով լուծելու համար</p>	<p>2. ԱՊՊԱ համակարգի ներդրումը մեծացրել է խցանումներն երթևեկության մեջ և վարորդների համար այս առումով ստեղծվել են որոշակի անհարմարություններ</p>
<p>3. Ձևավորվել է իրական վիճակագրություն ճանապարհատրանսպորտային պատահարների, վարորդների վարորդական պատմության, ավտոտրանսպորտային միջոցների սեփականատերերի՝ այս ոլորտում վարքագծի, տարբեր ռիսկային խմբերում գտնվող ավտոմեքենաների վերաբերյալ, ինչը բավարար հիմքեր է ստեղծում կատարել բարելավումներ և ճշգրտումներ այս ոլորտում</p>	<p>3. Դեռևս անհրաժեշտ մակարդակի չի հասել վնասների գնահատման և պատճառների փորձաքննության գործընթացներից հասարակական բավարարվածությունը</p>
<p>4. Ստեղծվել են շուրջ 750 աշխատատեղեր, ապահովագրական գործակալների քանակն ավելացել է ավելի քան 5.000-ով:</p>	

ԾՐԱԳՐԵՐԸ

2016 թվականին նախատեսված միջոցառումները

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ		ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Հաստատված և 2016 թվականի փետրվար ամսվա ընթացքում գործողության մեջ մտնող փոփոխություններ		
1	Ծանուցումների էլեկտրոնային տարբերակի ներդրում	ԱՊՊԱ պայմանագրերում էլեկտրոնային հասցեն կդարձվի պարտադիր նախապայման: Եթե Ապահովադիրը հետագայում գրավոր ծանուցման այլ եղանակ չի նշել ապահովագրական ընկերությանը դիմելիս, ապա ԱՊՊԱ ոլորտում փորձաքննությունների և հատուցումների գործընթացի բոլոր ծանուցումները որպես Ապահովադիր և տուժող կիրականացվեն տվյալ էլեկտրոնային հասցեի միջոցով: Արդյունքում հնարավորություն կստեղծվի ճանապարհատրանսպորտային պատահարի բոլոր կողմերին արագ և պատշաճ ծանուցել՝ դրանով գործընթացի տևողությունը կրճատելով 5-ից մինչև 10 օրով:
2	Ինքնուրույն կարգավորման վնասի համակարգի ներդրում	ԱՊՊԱ ոլորտում ներդրվում է մինչև 50.000 դրամի գույքային պահանջներ առաջացնող ճանապարհատրանսպորտային պատահարների մասնակից վարորդների կողմից պատահարների ինքնուրույն գրանցման գործընթաց: Նոր գործընթացն ենթադրում է, որ այն դեպքում, երբ պատահարի արդյունքում մեղավոր վարորդի նկատմամբ անմեղ վարորդի գույքային պահանջը չի գերազանցում 50.000 դրամը, ապա ԱՊՊԱ պատահարի մասնակից վարորդներն ինքնուրույն՝ առանց ապահովագրական ընկերության և ոստիկանության ներկայացուցչի համաձայնության, դեպքի վայր ժամանման և գրանցման, լրացնում են համաձայնեցված հայտարարագիրը և պարզեցված ու արագացված ընթացակարգով հատուցում ստանում ապահովագրական ընկերությունից: Հատուցման այս շեմի շրջանակներում ընկնող դեպքերն այս պահին կազմում են ընդհանուր պատահարների քանակի մոտ 20 %-ը: Փոփոխվել և ՀՀ կառավարության հաստատմանն է առաջարկվել նաև համաձայնեցված հայտարարագրի նոր ձևը. այն դարձել է առավել մատչելի լրացման համար: Նոր համակարգի բարեհաջող գործարկման դեպքում նախատեսվում է վնասի շեմի որոշակի բարձրացում:



Առաջարկվող փոփոխություններ, որոնց նախագծերն արդեն շրջանառված են

3	ԱՊՊԱ պայմանագրերի կնքման գործընթացի պարզեցում	<p>Էապես պարզեցվում և ստանդարտացվում է ԱՊՊԱ պայմանագրերի կնքման գործընթացը, կստեղծվեն հնարավորություններ, որպեսզի ապահովագրական ընկերությունները կարողանան առցանց, վճարահաշվարկային համակարգերի միջոցով՝ այդ թվում վճարային ցանկացած տերմինալների և բջջային հավելվածների միջոցով իրենց հաճախորդներին առաջարկել կնքել ԱՊՊԱ պայմանագրեր և կատարել վճարումներ՝ առանց ապահովագրական ընկերություն այցելելու:</p>
4	<p>Սակագների և բռնուս մալուս համակարգի պարզեցում և կատարելագործում՝ ներառյալ անցում Ապահովադիրների պատմության վրա հիմնված բռնուս-մալուս համակարգին: Ռիսկային գործակիցների ճշգրտում</p>	<p>Ձևավորված վիճակագրական տվյալները թույլ են տալիս ճշգրտել սակագնի հաշվարկի հիմքում ընկած ռիսկային գործակիցների չափերը: Վիճակագրական տվյալների ձևավորման արդյունքում ցածր ռիսկային խմբերում գտնվող ավտոմեքենաների սեփականատերերը կդադարեն վճարել բարձր ռիսկային խմբում գտնվողների համար և կվճարեն ավելի ցածր ապահովագրավճարներ, իսկ բարձր խմբում գտնվողները՝ կվճարեն իրենց ռիսկայնությանը համարժեք բարձր ապահովագրավճարներ:</p> <p>Նախատեսվում է անցում կատարել առավել պարզ՝ միայն Ապահովադիրների (ավտոմեքենաների սեփականատերերի) պատմության վրա հիմնված բռնուս-մալուս համակարգին, ինչը թույլ կտա Ապահովադիրներին ինքնուրույն կառավարել իրենց ռիսկերը և ցանկացած վարորդի հանձնել վարման՝ առանց ապահովագրական ընկերությանը տեղեկացնելու և ԱՊՊԱ պայմանագրում որևէ փոփոխություն կատարելու:</p>



Փոփոխություններ, որոնց վերաբերող նախագծերը կշրջանառվեն առաջիկա 2 ամիսների ընթացքում

<p>5</p>	<p>Պատահարների գրանցման և խցանումները կառավարելու համար բոլոր անհրաժեշտ գործառույթների (գործիքների) կենտրոնացում միայն Ճանապարհային ոստիկանությունում</p>	<p>«Կենտրոնական Բանկի և «Ոստիկանության հետ ձեռքբերված նախնական պայմանավորվածության համաձայն՝ Ճանապարհային երթևեկության բոլոր կարգավորումներն իրականացնելու և խցանումները կառավարելու համար բոլոր անհրաժեշտ գործառույթները (գործիքները) առաջարկվում է կենտրոնացնել միայն «Ճանապարհային ոստիկանությունում»:</p> <p>Մասնավորապես առաջարկվում է պատահարը գրանցելու, պատահարի վերաբերյալ ելակետային տվյալները հավաքագրելու և պատահարի վայրից ավտոմեքենան տեղաշարժելու թույլտվության գործառույթների իրավասությունը թողնել միայն Ճանապարհային ոստիկանությանը: Գրանցման ենթակա չեն լինի միայն ինքնուրույն կարգավորվող վնասները, որոնք իրականացվում են համաձայնեցված հայտարարագրի լրացման միջոցով: ԱՊՊԱ ոլորտում միայն գույքային վնասներով պատահարների փորձաքննություններ կատարելու նպատակով միասնական եղանակով ՃՈ-ից կստացվեն պատահարի վերաբերյալ ելակետային տվյալները և պատահարների տեսաձայնագրությունների էլեկտրոնային տարբերակներն՝ առկայության դեպքում:</p> <p>«Ոստիկանությունն այս պահին համապատասխան օրենքների փոփոխությունների նախագծերն արդեն շրջանառել է:</p>
<p>6</p>	<p>Գույքային վնասներով պատահարների փորձաքննությունների գործընթացի տեղափոխում ԱՊՊԱ ոլորտ</p>	<p>Գույքային վնասներ պարունակող ճանապարհատրանսպորտային պատահարների դեպքում պատահարների գրանցումից բացի հետագա փորձաքննությունների (պատճառի և վնասի) և ապահովագրական հատուցումների գործընթացի կազմակերպման գործառույթներն ամբողջությամբ առաջարկվում է տեղափոխել ԱՊՊԱ ոլորտ:</p>



	ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
7	Ուղիղ հատուցումների համակարգի ներդրում	Սպասարկման որակի բարելավման նպատակով կառաջարկվի ներդնել ուղիղ հատուցումների համակարգը, ինչը նշանակում է, որ ապահովադիր հանդիսացող տուժողները հատուցում ստանալու համար կդիմեն իրենց կողմից ընտրված և իրենց հետ ԱՊՊԱ պայմանագիր կնքած ապահովագրական ընկերությանը, որից հետո ապահովագրական ընկերությունները միմյանց նկատմամբ կիրականացնեն փոխհաշվարկներ (քլիրինգ):
8	Հատուցումների գործընթացի կրճատում գրեթե 3 անգամ	<p>Հատուցումների ներկայիս մոտ 16-ից մինչև 90 օր տևողությամբ գործընթացն առաջարկվող կարգավորումների արդյունքում կստացվի՝</p> <ol style="list-style-type: none"> 1. Համաձայնեցված հայտարարագրով դեպքերում՝ 4-ից 11 օր, 2. Ստանդարտ դեպքերում՝ 10-ից մինչև 27 օր:
9	Բյուրոյի կայքի միջոցով մի շարք տեղեկություններ ստանալու հնարավորության ստեղծում	<p>Նախատեսվում է համապատասխան նույնականացման տվյալների առկայությամբ Բյուրոյի կայքի միջոցով հնարավորություն ստեղծել ստանալու տեղեկատվություն՝</p> <ol style="list-style-type: none"> 1. Ավտոմեքենայի ԱՊՊԱ պայմանագրի վերաբերյալ, 2. Ապահովադրի բռնուս-մալուս դասի վերաբերյալ, 3. Վարորդի վարորդական պատմության վերաբերյալ:
10	Green card համակարգին անդամակցելու գործընթացի մեկնարկ	2015 թվականի դեկտեմբերին Բյուրոյի ընդհանուր ժողովը որոշում է կայացրել սկսել Green Card համակարգի անդամակցության գործընթացը: Միջինում նման անդամակցության գործընթացը տևում է մեկից երկու տարի: Բյուրոն 2016 թվականի հունվարի սկզբին արդեն գրավոր դիմել է Green card Բյուրոյին՝ անդամակցության գործընթաց սկսելու համար:

